ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի ապրիլ ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2019 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 19703.7 մլն դրամ՝ պլանավորված 17800.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 10.7 տոկոսով կամ 1903.7 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 3.3 տոկոսով կամ 635.9 մլն դրամով:

Ապրիլ ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 7991.7 մլն դրամ՝ պլանավորված 7000.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 14.2 տոկոսով կամ 991.7 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 2.8 տոկոսով կամ 215.2 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 186 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 10 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 51 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 61.2 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 16 ստուգում՝ 58.1 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգի շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 14, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 7, վարձու աշխատողների չձևակերպման 4 և ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 1 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 107 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 67-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 17-ը՝ ելակետային տվյալների ու դրանց ուղղիչ գործակիցների ճշտության, 5-ը՝ ակցիզային

դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 18 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ թվով 4 հայցադիմում՝ 150.0 հազ. դրամ գումարով, պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ 1 հայցադիմում՝ 1.8 մլն դրամ գումարով: Նույն ժամանակահատվածում ավարտվել են բռնագանձման հայցերով 2 գործ՝ 9.5 մլն դրամ գումարով, վճարման կարգադրության հայցերով 1 գործ՝ 10.0 հազ. դրամ գումարով և 1 սնանկության գործ՝ 9.0 մլն դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 94 վարչական գործով սահմանվել է 1.4 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 13172 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 11971:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 211 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում ապրիլ ամսում կատարվել է վերադարձ 193 վարձու աշխատողի՝ 28.7 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հաշվետու ամսում գործունեությունը նոր սկսող 47 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթների վերաբերյալ հրահանգը, լրացումներ կատարվել «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմում հարկային ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող ծառայողների իրավունքների, պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման, դասային (հատուկ) կոչման մասին հարկային ծառայության պաշտոնների» նկարագրերում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և տրվել առաջարկություններ:

Հաշվետու ամսում ֆինանսների նախարարը հանդիպումներ է ունեցել ՀՀ ֆինանսների նախարարի և պետական եկամուտների կոմիտեի նախագահի հետ, որոնց ընթացքում քննարկվել են Արցախի Հանրապետությունում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման, ինչպես նաև կառույցների համագործակցությանն առնչվող հարցեր:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ամսում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Ապրիլ ամսում հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին է ներկայացվել 2 դիմում-գանգատ, որից 1-ը օրենսդրությամբ սահմանված կարգով մերժվել է, իսկ մյուսը՝ քննման ընթացքում է:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել է առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկը:

Հաշվետու ամսում հարկային մարմին է մուտքագրվել 210, ելքագրվել՝ 90 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 6 գրություն, որից 4-ը՝ էլեկտրոնային և «Skype» հեռաձայնային ծառայության միջոցով:

ՀՎՄՀՎԻԲ պետ **Ա. Մուսայելյան**